ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2022 թվականի հոկտեմբերի 13-ի, ժամը 14:00-ի նիստի
N 2 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Թաթուլ Մելսիկի Մկրտչյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Թ.Մ.Մկրտչյանը 2003 թվականի նոյեմբերի 1-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնում. նախ՝ 01.11.2003 - 31.08.2004՝ դասախոս, 01.09.2004 - 23.09.2010՝ ասիստենտ, իսկ 2010 թվականի սեպտեմբերի 24-ից՝ դոցենտ: Վերջին 5 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն: Թ.Մ.Մկրտչյանը գիտամանկավարժական աշխատանքին զուգահեռ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում զբաղեցրել է նաև վարչական պաշտոններ. 01.09.2005 - 15.05.2006՝ ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, 01.07.2011 - 31.08.2019՝ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան, իսկ 2019 թվականի սեպտեմբերի 2-ից՝ գիտության գծով պրոռեկտոր:

Թ.Մ.Մկրտչյանը 1995 թվականին գերազանցությամբ ավարտել է Սիսիանի թիվ 3 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել և 2000 թվականին ավարտել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի ((ԵՊՏԻ), ներկայում՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (ՀՊՏՀ)) ընդհանուր տնտեսագիտության ֆակուլտետը և նրան շնորհվել է տնտեսագետի որակավորում «Ազգային էկոնոմիկա» մասնագիտությամբ: 2000 թվականին ընդունվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի առկա ուսուցման

ասպիրանտուրա Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ճյուղերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Թ.Մ.Մկրտչյանը 2003 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հարկային քաղաքականության ազդեցությունը մակրոտնտեսական իրավիճակի վրա» թեմայով և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2005 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում: 2016 թվականին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն «Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան: Նա հրատարակել է 66 գիտական աշխատանք: Դոկտորական ատենախոսություն պաշտպանելուց հետո ունի տվյալ բնագավառում 20 հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ (1 ուսումնական ձեռնարկ (անգլերեն, ռուսերեն), 19 գիտական հոդված, այդ թվում 10-ը՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում):

Թ.Մ.Մկրտչյանի գիտական ղեկավարությամբ պաշտպանվել և ՀՀ ԲՈԿ-ի կողմից հաստատվել է մեկ թեկնածուական ատենախոսություն: Նա 2019 թվականից ՀՀ ԲՈԿ-ի տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի նախագահն է: Թ.Մ.Մկրտչյանը սկզբունքային, բանիմաց գիտնական մանկավարժ է, ունի մասնագիտական պատրաստվածության բարձր մակարդակ, պարտականությունների նկատմամբ պատասխանատվության մեծ զգացում, մարդկային բարձր արժանիքներ: Թ.Մ.Մկրտչյանը մշտապես աշխատում է իր գիտելիքների խորացման ուղղությամբ՝ գիտական գործունեության արդյունքները հասանելի դարձնելով ուսանողներին և ասպիրանտներին: Իր կատարած դրական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը:

Մակրոէկոնոմիկայի ամբիոնը միաձայն (կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) երաշխավորել են Թ.Մ.Մկրտչյանին՝ մասնակցելու գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության

դոկտոր Թաթուլ Մելսիկի Մկրտչյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ պրոֆեսորի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 57, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկության պահին դահլիճում չէր Մ.Ս.Մելքումյանը):

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին և քվեարկությանը մասնակցել են 58-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 57, դեմ՝ 1, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.- **1.** Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտության գծով պրոռեկտոր, մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության դոկտոր Թաթուլ Մելսիկի Մկրտչյանի** կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 3-րդ գլխի 6-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերության պահանջներին՝ **Թաթուլ Մելսիկի Մկրտչյանին** շնորհել **պրոֆեսորի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»** մասնագիտությամբ:

2. Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան